ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 1/2

ք. Երևան 30 սեպտեմբերի 2021թ.

ԵՊՀ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԵՎ ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ՝ ԵՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 28-րդ կետով, հիմք ընդունելով ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրված ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուների՝ ԵՊՀ գիտական խորհրդում կայացած ընտրության արդյունքները՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրված և ԵՊՀ գիտական խորհրդում ընտրված ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի պրոֆեսորադասախոսական կազմի ցուցակը.

1.	Աթաբեկյան Վարուժան Սերգեյի	Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2.	Գաբրիելյան Մխիթար Ռազմիկի	Հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու
3.	Խաչատրյան Նարինե Գագիկի	Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
4.	Փոլադյան Աննա Արշակի	Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
5.	Քոչարյան Հայկ Մկրտչի	Արաբագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

2. Միջնորդությամբ հանդես գալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության առջև՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամության՝ Համալսարանի կողմից առաջադրված վերոնշյալ կազմը ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելու համար:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ